Concern Dialog

ՀՀ Քաղաքացիության վերաբերյալ օրենսդրության փոփոխությունների մասին

Նախաբան

27.11.2023 թվականին և 04.01.2024 թվականին ուժի մեջ են մտել «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիության մասին» օրենքում («**Օրենք**») փոփոխություններ և լրացումներ[1] մտցնելու վերաբերյալ երկու օրենքներ: Սույնով ներկայացվում է Օրենքում հիմնական փոփոխությունների ամփոփ նկարագիրը:

Սահմանվել են քաղաքացիություն ստանալու նոր հիմքեր

Նախ և առաջ, Օրենքի գործող խմբագրությամբ լայնացվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու հիմքերի շրջանակը: Այսպես, ի հավելումն նախկինում առկա կարգավորումների, ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ անձը,

> որը ... ունի ՀՀ քաղաքացի զավակ ***<u>կամ ծնող</u>***. (նախկինում կարգավորումը վերաբերում էր բացառապես ՀՀ քաղաքացի զավակ ունենալուն)
>
> որի ծնողները (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են ՀՀ քաղաքացիություն, և ***<u>որը օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին մշտապես բնակվել է ՀՀ-ում</u>*** (նախկին կարգավորմամբ առկա չէր մգեցված կարգավորումը):

Այսպես, որպես քաղաքացիություն ստանալու հիմք ՀՀ քաղաքացի զավակ ունենալուց զատ սահմանվել է նաև ՀՀ քաղաքացի ծնող ունենալը:

Ինչ վերաբերում է երկրորդ կետով սահմանված փոփոխությանը, հատկանշական է, որ փոփոխությամբ համապատասխան հոդվածից **հանվել է նաև այն պահանջը, որ 18 տարին լրացած անձը երեք տարվա ընթացքում պետք է դիմում ներկայացներ ՀՀ քաղաքացիություն ստանալու համար (մինչև 21 տարեկանը)**: Ստացվում է, որ գործող կարգավորումների համաձայն քաղաքացիություն հնարավոր է ստանալ 1 տարի ՀՀ-ում մշտապես բնակվելու հիմքով (առանց դիմումատուի տարիքով պայմանավորված սահմանափակումների):

ՀՀ Քաղաքացիությունը դադարեցրած անձանց պարտավորությունների վերաբերյալ

Օրենքի փոփոխություններով ՀՀ Քաղաքացիությունը դադարեցրած անձանց համար սահմանվել է ՀՀ տարածքը լքելու կամ երկրում բնակությունն օրինականացնելու համար ժամկետ: Այսպես գործող կարգավորումների համաձայն.

[1] Օրենքի փոփոխությունները հնարավոր է գտնել այստեղ և այստեղ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելու հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձը պարտավոր է օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետությունում իր բնակությունն օրինականացնելու համար կամ դուրս գալ Հայաստանի Հանրապետության տարածքից:»

Այստեղ հատկանշական է այն հանգամանքը, որ նախկինում առկա կարգավորումներով ևս ՀՀ-ում գտնվող ցանկացած անձ ՀՀ-ում օրինական բնակվելու իրավունք պետք է ունենար, և քաղաքացիությունը դադարեցնելուց հետո ՀՀ-ում գտնվելու դեպքում պետք է օրինականացներ բնակությունը (օրինակ՝ կացության կարգավիճակ ստանալով): Քննարկվող փոփոխությամբ **հստակեցվել է բնակությունը օրինականացնելու ժամկետները[2]:**

Անձանց որոշակի խմբի կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար դիմելու ժամկետի երկարաձգում

Օրենքի փոփոխություններով ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայերի կամ ՀՀ-ում մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիների ՀՀ քաղաքացի ճանաչվելու հնարավորության ժամկետը երկարաձգվել է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը: Նախկին կարգավորումներով այդպիսի ժամկետ էր նախատեսվում մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

Արդիական է 06.02.2024 թվականի դրությամբ:

[2] Անհրաժեշտ է հաշվի առնել, որ սահմանված ժամկետում այս երկու գործողություններից որևէ մեկը չկատարելու դեպքում վրա կհասնի ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվությունը, որի համաձայն՝ օտարերկրացիների կողմից ՀՀ-ում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով բնակվելը, ...՝ առաջացնում է տուգանք՝ 50,000 ՀՀ դրամից 100,000 ՀՀ դրամի չափով: